



ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Հաստատված է՝
“Մեղլար Բանկ” ՓԲԸ Խորհրդի
30.12.2016թ. թիվ ____ որոշմամբ

Հաստատված է՝
“Մեղլար Բանկ” ՓԲԸ Գործադիր
տնօրենի
30.12.2016թ. թիվ __ _ որոշմամբ

Գործադիր տնօրեն՝ Ս. Մուսավի

Խորհրդի նախագահ՝ Մ.Բիգդելի

Խորհրդի անդամ՝ Հ. Բահարի

Խորհրդի անդամ՝ Մ.Սայիդի

Խորհրդի անդամ՝ Հ. Ազադի

Խորհրդի անդամ՝ Մ. Շադֆար

Երևան



ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆՊԱՏԱԿԸ.....	3
2.	ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ.....	3
3.	ԱՌՆԶՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	3
4.	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ	3
4.	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ	3
5.	ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
6.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	4
7.	ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
8.	ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ.....	5
9.	ՇԱՀԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	6
10.	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ	7
11.	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	7



1. ՆՊԱՏԱԿԸ

- 1.1. Սույն ընթացակարգը սահմանում է՝
- Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների շահերի բախման հնարավոր դեպքերը
 - շահերի բախման բացառման և կանխարգելման հետ կապված Բանկի, Բանկի աշխատակիցների պարտականությունները.
 - Բանկի կողմից շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:
- 1.2. Սույն ընթացակարգն ուղղված է ապահովելու՝
- Բանկի Հաճախորդների շահերի գերակայության ապահովումը Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ
 - Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը
 - Բանկի պարտավորությունները՝ գործելու ազնիվ և անկողմնակալ բանկի Հաճախորդների և գործընկերների հետ:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն ընթացակարգի պահանջները տարածվում են Բանկի բոլոր աշխատակիցների, Բանկի հետ կապված անձանց, ինչպես նաև Բանկի աշխատակիցների հետ փոխկապակցված անձանց վրա:

3. ԱՌՆԶՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սույն ընթացակարգի առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.

- 3.1. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք
- 3.2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- 3.3. ՀՀ ԿԲ Խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4:
- 3.4. ՀՀ ԿԲ այլ իրավական ակտեր:
- 3.5. Բանկի «Անձնակազմի կառավարման քաղաքականություն»:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Սույն ընթացակարգի կիրառման և դրա պահանջների կատարման համար պատասխանատու է Բանկի Դիրեկտային Բաժինը:

4. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ



ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Խնբագրություն-----, փոփոխություններ -----:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5.1 **Բանկ**՝ «Մելլաթ» բանկ ՓԲԸ:

5.2 **Հաճախորդ**՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, որն օգտվում է Բանկի կողմից մատուցվող ծառայություններից (այդ թվում՝ ներդրումային), կամ որը դիմել է Բանկին այդ ծառայությունից օգտվելու նպատակով:

5.3 **Աշխատող**՝ Բանկի հետ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա Բանկի անունից կամ Բանկի կազմում հանդես եկող անձ:

5.4 **Բանկի ղեկավար**՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքով սահմանված բանկի ղեկավարներ:

5.5 **Բանկի հետ կապված անձ**՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքով սահմանված բանկի հետ կապված անձինք:

5.6 **Փոխկապակցված անձ**՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքով սահմանված փոխկապակցված անձինք:

5.7 **Շահերի բախում**՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում Բանկի, Բանկի ղեկավարների, Բանկի հետ կապված անձանց, Աշխատողների հետ փոխկապակցված անձանց, Աշխատողների և Հաճախորդների միջև առաջացող գույքային և/կամ այլ շահերի հակասություն, որի արդյունքում Բանկի ղեկավարների և/կամ Աշխատողների գործողությունները կամ անգործությունը առաջացնում են և/կամ կարող են առաջացնել վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ Հաճախորդի և/կամ Բանկի համար:

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Բացակայում է:

7. ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատակիցները առաջնորդվում են սույն ընթացակարգով, Բանկի այլ ներքին ընթացակարգերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ՝ շահերի բախման կանխարգելմանն ուղղված միջոցառումների պահպանման նպատակով:

7.2. Բանկի յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի է դարձել ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվություն, պարտավոր է տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Բանկի ներքին աուդիտն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:



7.3. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Բանկը պետք է առաջնորդվի Հաճախորդների շահերի գերակայության սկզբունքով: Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի լավագույն շահերից:

7.4. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Բանկի աշխատակիցները պարտավոր են վեր դասել Բանկի Հաճախորդների շահերը սեփական կամ Բանկի շահերից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:

7.5. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը պարտավոր է Հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս տեղեկացնել այդ գործարքների մասին:

8. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող շահերի բախման հնարավոր դեպքերն են՝

- 8.1. Հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով արժեթղթերի վաճառք Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված պատվերում նշված էական պայմանները,
- 8.2. Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
- 8.3. Հաճախորդի միջոցների ներդրում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված անձանց պատկանող արժեթղթերում,
- 8.4. Հաճախորդին պատկանող արժեթղթերով Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ անտեսելով Հաճախորդի ներդրումային նպատակները,
- 8.5. Հաճախորդին այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները բխում են Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերից
- 8.6. Մեծ ծավալներով կամ Հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում՝ Հաճախորդից ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձման նպատակով,
- 8.7. Հաճախորդի միջոցների օգտագործում Բանկի սեփական առևտրային ռազմավարությունն իրականացնելու նպատակով,
- 8.8. Բանկում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված Հաճախորդի միջոցների կանխամտածված



պահում՝ Բանկի սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,

- 8.9. Էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց,
- 8.10. Ցանկացած այլ իրավիճակ, որի դեպքում Հաճախորդի շահերը հակասության մեջ են մտնում այլ Հաճախորդների, Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց շահերի հետ:

9. ՇԱՀԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- 9.1. Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման բացառման նպատակով Բանկում իրականացվում են հետևյալ միջոցառումները և սահմանափակումները՝
- 9.2. Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված կարգով,
- 9.3. Բանկն իրավունք ունի չկատարել հաճախորդի պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին,
- 9.4. Բանկի համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Բանկի սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Բանկի աշխատակիցների Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց կամ Հաճախորդի պատվերը մեկ այլ Հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
- 9.5. Բանկի աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին:
- 9.6. Բանկի աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել այնպիսի խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի վերջնական նպատակն է ի օգուտ Բանկի շահերին գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծում, կամ որը հակասում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին:
- 9.7. Բանկի աշխատակիցներին արգելվում է իրականացնել Հաճախորդի շահերից չբխող գործարքներ, որոնց վերջնական նպատակը տվյալ Հաճախորդից հօգուտ Բանկի գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումն է:



**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ՆԵՐՔԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ**

9.8. Ցանկացած իրավիճակում, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շահերի բախում, Բանկը պետք է՝

9.8.1. ձեռնպահ մնա իր և իր Հաճախորդների միջև շահերի բախման առարկա հանդիսացող գործարքների կնքումից՝ դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալով Հաճախորդի շահերին:

9.8.2. ձեռնարկի բավարար միջոցներ իր և իր Հաճախորդների կամ իր տարբեր Հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները կանխելու համար:

10. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սույն ընթացակարգով սահմանված գործընթացների մեջ ներգրավված Բանկի աշխատակիցներն անհատական պատասխանատվություն են կրում Բանկի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով, բանկի ներքին կարգերով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն ընթացակարգով նախատեսված պահանջների ապահովման նպատակով Բանկի ղեկավարներն ու աշխատակիցները պարտավոր են սահմանված կարգով Բանկին տրամադրել իրենց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները:

11.2. Դիլինգային բաժնի պետը իրականացնում է սույն ընթացակարգով սահմանված պահանջների նկատմամբ հսկողություն և համապատասխանության ապահովման գործառույթները կանոնակարգող Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է համապատասխան հաշվետվություն:

11.3. Սույն ընթացակարգով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Ներքին աուդիտի վարչությունը: